ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «13» 05 2025 թ. № 1299-Լ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱՑՎՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՑԱՆԿԸ, ԱՅԴ ՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 12.1-ին և 13-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի ապրիլի 3-ի N 374-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 4-րդ կետով՝

հրամայում եմ.

1.Սահմանել՝

1) Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող և Հայաստանի Հանրապետության

տարածքում իրացվող համապատասխանության գնահատման ենթակա՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) ծածկագրերի նշմամբ պարենային արտադրանքի ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող և Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող համապատասխանության գնահատման ենթակա պարենային արտադրանքի համապատասխանության հայտարարագրի լրացման կանոնները և ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

2. Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելիս սույն հրամանի N 1 հավելվածով սահմանված ցանկում ներառված և անասնաբուժական հսկողության (վերահսկողության) կամ կարանտին բուսասանիտարական հսկողության (վերահսկողության) ենթակա արտադրանքի նկատմամբ կիրառվում են Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 317 կամ Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 318, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 25-ի N 621 և 2010 թվականի հոկտեմբերի 21-ի N 1442-Ն որոշումներով սահմանված պահանջները:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և գործում է մինչև 2027 թվականի սեպտեմբերի 1-ը:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ